Հավելված
ՀՀ կառավարության 2018 թ.
ապրիլի 12-ի նիստի N 14
արձանագրային որոշման

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ ՄԵԹՈԴԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆԸ

1. Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության վիճակագրության վարման մեթոդի կատարելագործման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 884-Ն որոշմամբ ստեղծված սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգից (այսուհետ՝ ՍԷԿՏ համակարգ) անհրաժեշտ տեղեկատվության հիման վրա համակարգչային ծրագրի կիրառմամբ ապահովել հետևյալ վիճակագրական տվյալների ստացումը.

1) Հայաստանի Հանրապետություն ժամանումների և Հայաստանի Հանրապետությունից մեկնումների սահմանային գրանցումների քանակները, այդ թվում՝ ըստ քաղաքացիության,
2) Հայաստանի Հանրապետություն այցելուների այցելությունների քանակը, այդ թվում՝ ըստ քաքաղացիության, սեռի, սահմանային անցման կետերի, տարիքային խմբերի և այցի տևողությունների,
3) ներգնա և արտագնա զբոսաշրջային այցելությունների քանակները, այդ թվում՝ ներգնա զբոսաշրջային այցելությունների համար ըստ քաղաքացիության, սեռի, սահմանային անցման կետերի, տարիքային խմբերի և այցի տևողությունների, ներգնա զբոսաշրջային այցելությունների քանակի մեջ կրկնվող այցելությունների քանակը, այդ թվում ըստ քաղաքացիության,
4) Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության առաջարկությամբ այլ վիճակագրական տվյալներ:

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը իրականացնել սույն հավելված 1-ին կետով նախատեսված գործառույթները,

3. Սահմանել, որ սույն հավելվածի 1-ին կետով նախատեսված գործառույթների պատշաճ իրականացումն ապահովելու նպատակով

1) անհրաժեշտ հզորությամբ սերվերի և համակարգչային ծրագրի ձեռքբերումը և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանը տրամադրումն ապահովում է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը,
2) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը ՍԷԿՏ համակարգից Հայաստանի

Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանն ապահովում է անհրաժեշտ տեղեկատվության հասանելիություն,

3) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետություն այցելուների այցելությունների քանակի ճշգրտման նպատակով Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանն ապահովում է տեղեկատվության հասանելիություն այցելուների անվանացանկից այն անձանց վերաբերյալ, ովքեր ստացել են ՀՀ-ում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) և որպես աշխատող վերջիններիս համար հարկային գործակալները ներկայացրել են օրենսդրությամբ սահմանված գրանցման հայտերը, ինչպես նաև քանակական տվյալներ ՀՀ-ում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող այն օտարերկրյա քաղաքացիների վերաբերյալ, ում նկատմամբ հարկային գործակալների կողմից հաշվետու ժամանակաշրջանում վճարվել կամ հաշվարկվել է եկամուտ,

4) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանությունը հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետություն այցելուների այցելությունների քանակի ճշգրտման նպատակով Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանն ապահովում է տեղեկատվության հասանելիություն Հայաստանի Հանրապետություն այցելուներից այն անձանց քանակի վերաբերյալ, որոնք ունեն Հանրային ծառայության համարանիշ կամ կացության կարգավիճակը հավաստող փաստաթուղթ,

5) սույն հավելվածով նախատեսված վիճակագրության վարման մեթոդը փորձարկվում է 2018 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում՝ Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունում անհրաժեշտ համակարգչային (Սերվեր) և ծրագրային ապահովման ներդրումից հետո: